Հավելված
ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 15 -ի թիվ 103-Ա որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ

1. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:

2. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:

3. Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:

4. Մուտքի մոտ պետք է փակցված լինի ցուցանակ, որտեղ նշվում են կազմակերպության անվանումը, տիպը, կազակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:

5. Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:

6. Խոհարարն ու հրուշակագործը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:

7. Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան աշխատանքային արտահագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված կազմակերպության կնիքով:

8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

9. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

10.Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

11. Ժամը 24-^{00}-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը:

12. Ժամը 24-^{00}-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է ձայնամեկուսացված լինեն, որպեսզի ներսի աղմուկը չհարուցի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, ինչպես նաև կազմակերպության

ղեկավարի կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օբյեկտի գործունեության հետ կապված նաև օբյեկտից դուրս լռության պահպանման ուղղությամբ:

13. Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:

14. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

15. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

16. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

17. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

Աշխատակազմի քարտուղար *Վարդան Գաբրիելյան*